ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**10 դեկտեմբերի 2024 թվականի N 524-Ա**

**«ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 8 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԷԴԳԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՉՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ ՀՐԱՆՈՒՇ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով «Կապանի թիվ 8 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Է. Հարությունյանի դիմումը՝

**ո ր ո շ ու մ եմ՝**

1. «Կապանի թիվ 8 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Էդգար Հարությունյանին 2024 թվականի դեկտեմբերի 16-ից 20-ը ներառյալ տրամադրել 2023-2024 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդի չօգտագործված մասը՝ 5 աշխատանքային օր:
2. Արձակուրդում գտնվելու ընթացքում «Կապանի թիվ 8 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության տնօրենի տեղակալ Հրանուշ Հայրապետյանին:

Recoverable Signature

X

Signed by: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2024թ. դեկտեմբերի 10
ք.Կապան